



Գնեք կամ վարձակալեք կենդանի տնկիներ և աջակցեք Հայաստանի անտառների պահպանությանը



Ամեն տարի ծննդյան տոների շրջանում Հայաստանի անտառները հայտնվում են անպաշտպան վիճակում՝ հազարավոր եղևնիների և սոճիների պայթիկի հատումների պատճառով: Երևանի կենդանաբանական այգին այս հարցի լուծման համար նոր մոտեցում է առաջարկում:

Այսուհետ կարող եք գնել կամ վարձակալել Ամանորի կարևոր խորհրդանշանը՝ տունածառը և Սուրբ ծննդյան տոներն անցկացնել կենդանի խորհրդանշանով:

Չամբյուղով սոճիները ծննդյան տոներից հետո կարող եք նվիրաբերել կենդանաբանական այգուն գարնանը ծառատունկ իրականացնելու համար կամ տնկել ձեր բակում:

Սոճիների վարձակալության արժեքը 30,000 դրամ է, գնելու դեպքում 40,000 դրամ: Երկու և ավելի ծառեր վարձակալելու դեպքում՝ գումարը մեկ ծառի համար կարժենա 25.000 ՀՀ դրամ: Երևանում առաքումն անվճար է:

Ցանկացողները հնարավորություն կունենան գալ Երևանի կենդանաբանական այգի և անձամբ ընտրել իրենց ծառը: Ծառերի վաճառքի ողջ հասույթը կնվիրաբերվի Երևանի կենդանաբանական այգու կենդանիների խնամքին: Լրացուցիչ տեղեկությունների համար գանգահարեք (+37410) 562-262, 098-31-10-32:

Այցելեք Երևանի կենդանաբանական այգի Մյասնիկյան 20 հասցեով կամ www.yerevan.zoo.am կայք էջը:

Ընտրիվոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:



Երևանի կենդանաբանական այգին 2013-ին



2013-ը Երևանի կենդանաբանական այգու համար նոր ձեռքբերումների տարի էր: Կարևոր ձեռքբերումներից էր տարբեր կենդանաբանական այգիների հետ Համագործակցության հուշագրերի ստորագրումը: Հատկանշական էր Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի WWF Համագործակցության հուշագրի ստորագրումը:

Երևանի կենդանաբանական այգին ողջունեց Հիմնադրամի (FPWC) և WWF հայաստանյան մասնաճյուղի համագործակցությունը, ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների վերարտադրության ծրագրերի իրականացումը, հատկապես անհետացած եզրին գտնվող Հայկական մուֆլոնի բազմացման, վերարտադրության և վայրի բնություն ետ վերադարձնելու գործընթացը:

Երևանի կենդանաբանական այգու համար այս տարվա կարևոր ձեռքբերումներից էր նաև կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանի մասնակցությունը՝ EAZA-ի տարեկան գիտաժողովին: Ամատերդամի «Արտիս» թագավորական կենդանաբանական այգու և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) աջակցության շնորհիվ արդեն երկրորդ տարին է, ինչ Երևանի կենդանաբանական այգին հնարավորություն է ունենում մասնակցելու EAZA-ի տարեկան գիտաժողովին: Երևանի կենդանաբանական այգու տնօրեն Ռուբեն Խաչատրյանը գիտաժողովին ներկայացրեց 2012-2013 թվականների ձեռքբերումները, կատարված նոր շինարարական աշխատանքների հաշվետվությունները: Մի շարք կենդանաբանական այգիների հետ ձեռք բերվեցին կենդանիների նվիրաբերություններ և փոխանակումներ իրականացնելու համատեղ պայմանավորվածություններ: Առաջիկայում նախատեսվում է նաև Իսրայելի Բիբլիական կենդանաբանական այգու տնօրենի այցը Երևանի կենդանաբանական այգի՝ մի քանի այլ մասնագետների հետ միասին:

Երևանի կենդանաբանական այգի մի քանի անգամ այցելեց Փղերի պահպանության եվրոպական միության (EEG) առաջատար մասնագետ Թորիաս Դորնբուլը: Թորիասի այցի նպատակը՝ այգու աշխատակիցների, ինչպես նաև Գրանդ փղի հետ տարվող թրեյնինգների անցկացումն էր, ինչպես նաև Գրանդ փղին նոր հրահանգներ սովորեցնելը:

Ողջ տարվա ընթացքում այցելուների համար կազմակերպվեցին թատերական և երաժշտական բազմաթիվ միջոցառումներ: 2013-ի մայիսի 1-ին, Երևանի կենդանաբանական այգու տարեշրջանի պաշտոնական բացման օրը, Երևանի կենդանաբանական այգին մի շարք անակնկալներ էր պատրաստել իր այցելուներին: Մետրո «Երիտասարդական» կայարանի հարակից տարածքում տեղի ունեցավ կենդանաբանական այգու կանգառի պաշտոնական բացումը, որն իրականություն դարձավ այգու գործընկեր HSBC Հայաստան բանկի աջակցության շնորհիվ: Լույս օրը ներկայացվեց Երևանի կենդանաբանական այգու նոր վերկայքն ու «2ու» ամսագիրը:



Երևանի կենդանաբանական այգու տարեշրջանի բացումից մեկ ամիս անց, հունիսի 1-ին բացվեց Պտավոր բորենու նոր ազատավանդակը: Այն ընդգրկում է 650 քմ տարածք և համապատասխանում է Կենդանաբանական այգիների և Ակվարիումների Եվրոպական ասոցիացիայի (EAZA) չափանիշներին: Գետաձիերի ազատավանդակի հարևանությամբ բացվեց հանգստի նոր վայր: Այն շուրջ 120 քառակուսի մետր՝ տարածք է ընդգրկում և հնարավորություն է ընձեռում հետևել Հայկական մուֆլոնների տեղաշարժին: Այգին ունեցավ իր նոր քարտեզը, որն ունի հստակ տարբերանշաններ և գույներ, ինչի օգնությամբ ցանկացած տարիքի այցելու կարող է հեշտությամբ գտնել իր նախընտրած վայրը:

Ամռանը կրկին տեղի ունեցավ ֆիլմերի բացօթյա ցուցադրություններ, ինչին հետևում էին մասնագիտական քննարկումները: Անցկացվեցին Հեքիաթի ժամ ծրագիրը, Երիտասարդ ստեղծագործող՝ Լիլիթ Կարապետյանի գրքի շնորհանդեսը, Պաղպաղակի օրը: Երևանի կենդանաբանական այգու 72-ամյակի միջոցառումների շրջանակում աշնանը տեղի ունեցավ 6-րդ Համահայկական նկարչական օրը և Կենդանիների դիմակահանդես-շքերթը: Լոյսմբերին առաջին անգամ անցկացվեց Դիմի օր-մրցույթը: Երևանի կենդանաբանական այգի այցելեց Լեհաստանի «Չամոջ» կենդանաբանական այգու տնօրեն Լուկաշ Սուլովսկին:

Դեկտեմբերին, երբ այգին անցավ աշխատանքի ձմեռային ռեժիմի, այնուամենայնիվ ակտիվ աշխատանքն ու միջոցառումները չնվազեցին: Ամանորյա տոների նախաշեմին այգում տեղի ունեցավ «Չարդարանքի օր-մրցույթ»-ը, որտեղ երեխաներն իրենց մասնակցությամբ պատրաստեցին բազմաթիվ զարդեր և զարդարեցին կենդանաբանական այգին:

Տեղի ունեցավ «Ապրող ծառ» նախագիծն ու «Չարդարանքի տոն-մրցույթ»-ը



Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ՝ դեկտեմբերի 15-ին, Երևանի կենդանաբանական այգին փոքրերին ու մեծերին հրավիրել էր բնական տունածառի ընտրության, ինչպես նաև «Չարդարանքի տոն-մրցույթի», որտեղ այցելուները կարողացան իրենց ամանորյա բնական սոճիների ընտրությունն իրականացնել, իսկ երեխաները՝ մասնակցել «Չարդարանքի տոնին»: Միջոցառումները ներկա էր կենդանաբանական այգու բարեկամ, Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնը, ով մշտապես կարևորում է նման միջոցառումների անցկացումը: «Այն ինչ կապված է կենդանիների, երեխաների և բնապահպանական կրթության հետ մեզ գրավում է և միշտ փորձում ենք մասնակցել: Միայն այս ձևերը բավական է, որ տոն ստեղծվի»: Երեխաները յուրօրինակ զարդարանքներ պատրաստեցին և զարդարեցին իրենց սիրելի կենդանաբանական այգին: Տոն-մրցույթին մասնակցեցին հանրակրթական դպրոցների շուրջ 50 աշակերտներ: Լավագույն աշխատանքի հեղինակներն արժանացան մրցանակների: Իսկ գլխավոր մրցանակը շնորհվեց մայրաքաղաքի Ջոն Կիրակոսյանի անվան թիվ 20 դպրոցի 6-րդ դասարանի աշակերտներին, ովքեր օգտագործեցին իրենց դպրոցի շինարարական աղբը և պատրաստեցին երեք տունածառ: Աշակերտները ստացան «Չարդարանքի տոն-մրցույթ» մասնակցության վկայական և մեկ տարվա անվճար այցելության հնարավորություն՝ Երևանի կենդանաբանական այգի, ինչպես նաև հուշանվերներ:



Օրվա տոնական տրամադրությամբ էլ այցելուները, ովքեր նախընտրում էին տոներին ունենալ բնական տունածառ, ընտրեցին ամանորյա իրենց բնական սոճիները: Ի դեպ, բնական սոճիները կարող են ոչ միայն զարդարել Ձեր բնակարանը, այլև հրաշալի ամանորյա նվեր կարող են լինել Ձեր հարազատների համար: Եվ որ ամենակարևորն է, ծառերն արմատներով են՝ հատուկ ծաղկամաններով այն գարնանը տնկելու նպատակով:

Նեց այդ գաղափարից ոգևորված Երևանի կենդանաբանական այգի էին այցելել հայտնի հեռուստահաղորդավար և երգահան Անիտա Հախվերդյանը և նրա քույրը՝ լրագրող Լուսին Հախվերդյանը: «Մենք այսօր երկու ծառ գնեցինք, քանի որ ունեմ աղջիկ, ով բնությամբ է ապրում, և կարևորը՝ ծառը կտրած չէ, այլ՝ շնչող է: Սա մի նոր կուլտուրա է ներմուծում, որը լուծում է և բնապահպանական և մշակութային խնդիրներ»:

Ամանորյա տոների կապակցությամբ մինչև հունվարի 15-ը կենդանաբանական այգու մուտքը մինչև 16 տարեկանների համար կլինի անվճար: Իսկ ս/թ.դեկտեմբերի 29-ից մինչև 2014թ. հունվարի 3-ը ներառյալ բոլոր այցելուների մուտքը կլինի անվճար:

Դեռևս 2013-ի օգոստոսին ուսումնասիրվեցին Երևանի կենդանաբանական այգու բոլոր բաժինների հիմնահարցերը, հատկապես տարվեցին ձմեռան նախապատրաստական աշխատանքների ուսումնասիրություններ: Այսօր արդեն արձանագրում ենք, որ բոլոր աշխատանքներն ամբողջ ընթացքով իրականացվել են: Դեռ նախորդ տարի անցկացված գազատարի ցանցն ավելի է ընդլայնվել, և այս պահին բոլոր անհրաժեշտ վայրերում տեղային տաքացուցիչներ են տեղադրվել:

Գազատարի անցկացումն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) հավելյալ ներդրումների արդյունքում՝ դեռ 2011-ին:

Երևանի կենդանաբանական այգին դեկտեմբերի 1-ից անցել է ձմեռային ռեժիմի, հետևաբար այն կենդանատեսակները, որոնք ջերմասեր են տեղափոխվել են ձմեռանոցներ: Այգու աշխատակիցները գիշեր ու զոր 3 ժամը մեկ անգամ բոլոր ձմեռանոցներում ֆիքսում են ջերմաստիճանները: Այս ձևաչափը նորություն է Երևանի կենդանաբանական այգում:

Կան նաև կենդանիներ, որոնք ողջ ձմռանը գտնվում են դրսում, և բոլոր այցելուները կարող են ձմռանն էլ տեսնել իրենց սիրելի կենդանիներին, ինչպես օրինակ Եվրոպական եղևնիներն են, ուղտայծերը, Հայկական մուֆլոնները, Բեզոարյան այծերը, Աֆրիկյան առյուծները, Ամուրյան վագրերը, Պտավոր բորենին, Անդրկովկասյան գորշ արջերը, Սև և Սպիտակագլուխ անոզերը, ինչպես նաև այլ կենդանիների տեսակներ և թռչնատեսակներ:

Երևանի կենդանաբանական այգում ձմռանը ևս կշարունակվի իրականացվել կենդանիների զբաղվածության ծրագիրը: Սա տևական ծրագիր է, որի բացակայության դեպքում կենդանիների մոտ անմիջապես նկատվում են ստերեոտիպ շարժումներ և ագրեսիվ վարքագիծ: Ավելին, ծրագրի զարգացման և կատարելագործման համար արտերկրից պարբերաբար Երևանի կենդանաբանական այգի են հրավիրվում տարբեր մասնագետներ:



Գազատարի անցկացումն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) հավելյալ ներդրումների արդյունքում՝ դեռ 2011-ին:

Երևանի կենդանաբանական այգին դեկտեմբերի 1-ից անցել է ձմեռային ռեժիմի, հետևաբար այն կենդանատեսակները, որոնք ջերմասեր են տեղափոխվել են ձմեռանոցներ: Այգու աշխատակիցները գիշեր ու զոր 3 ժամը մեկ անգամ բոլոր ձմեռանոցներում ֆիքսում են ջերմաստիճանները: Այս ձևաչափը նորություն է Երևանի կենդանաբանական այգում:

Կան նաև կենդանիներ, որոնք ողջ ձմռանը գտնվում են դրսում, և բոլոր այցելուները կարող են ձմռանն էլ տեսնել իրենց սիրելի կենդանիներին, ինչպես օրինակ Եվրոպական եղևնիներն են, ուղտայծերը, Հայկական մուֆլոնները, Բեզոարյան այծերը, Աֆրիկյան առյուծները, Ամուրյան վագրերը, Պտավոր բորենին, Անդրկովկասյան գորշ արջերը, Սև և Սպիտակագլուխ անոզերը, ինչպես նաև այլ կենդանիների տեսակներ և թռչնատեսակներ:

Երևանի կենդանաբանական այգում ձմռանը ևս կշարունակվի իրականացվել կենդանիների զբաղվածության ծրագիրը: Սա տևական ծրագիր է, որի բացակայության դեպքում կենդանիների մոտ անմիջապես նկատվում են ստերեոտիպ շարժումներ և ագրեսիվ վարքագիծ: Ավելին, ծրագրի զարգացման և կատարելագործման համար արտերկրից պարբերաբար Երևանի կենդանաբանական այգի են հրավիրվում տարբեր մասնագետներ:

Երևանի կենդանաբանական այգում ձմռանը ևս կշարունակվի իրականացվել կենդանիների զբաղվածության ծրագիրը: Սա տևական ծրագիր է, որի բացակայության դեպքում կենդանիների մոտ անմիջապես նկատվում են ստերեոտիպ շարժումներ և ագրեսիվ վարքագիծ: Ավելին, ծրագրի զարգացման և կատարելագործման համար արտերկրից պարբերաբար Երևանի կենդանաբանական այգի են հրավիրվում տարբեր մասնագետներ:

Երևանի կենդանաբանական այգում ձմռանը ևս կշարունակվի իրականացվել կենդանիների զբաղվածության ծրագիրը: Սա տևական ծրագիր է, որի բացակայության դեպքում կենդանիների մոտ անմիջապես նկատվում են ստերեոտիպ շարժումներ և ագրեսիվ վարքագիծ: Ավելին, ծրագրի զարգացման և կատարելագործման համար արտերկրից պարբերաբար Երևանի կենդանաբանական այգի են հրավիրվում տարբեր մասնագետներ: